## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2024 թվականի N 3880

### «ԱՐՏ ՊԵՏՐՈԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՌԱՖԱՅԵԼ ՁԵՅՆԱԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1.Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը (նկարագրական մաս).**

Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Սահմանադրության հրապարակում գտնվող «ԱՐՏ ՊԵՏՐՈԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ ի դեմս տնօրեն Ռաֆայել Ձեյնալյանի 2024 թվականի օգոստոսի 21-ին թույլ է տվել վարչական իրավախախտում՝ վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում առանց թույլտվության հեղուկ վառելիքի վաճառք է կրկին իրականացրել, որի վերաբերյալ կազմվել է առևտրի և ծառայության բնագավառում վարչական իրավախախտում թույլ տալու փաստի մասին 01 արձանագրությունը:

2024 թվականի օգոստոսի 22-ի զեկուցագրի հիման վրա /մուտք՝ 2024 թվականի օգոստոսի 22-ի N Ք-6447/ 2024 թվականի օգոստոսի 22-ի N Ե-5634 ծանուցագրով «ԱՐՏ ՊԵՏՐՈԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ռաֆայել Ձեյնալյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է վարչական վարույթ, որի լսումը նշանակվել է 2024 թվականի սեպտեմբերի 05-ին՝ ժամը 11:00-ին:

2024 թվականի սեպտեմբերի 05-ին՝ ժամը 11:00-ին նշանակված լսման օրը վարչական վարույթը կասեցվել է մինչև Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեից Աբովյան համայնքի Սահմանադրության հրապարակի թիվ 7/2 հասցեի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ ապացույց ստանալը:

2024 թվականի սեպտեմբերի 11-ի դրությամբ կասեցումն առաջացրած հանգամանքը վերացել է՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեից ստացվել է պահանջված ապացույցը և վարչական վարույթի լսման օր է նշանակվել 2024 թվականի սեպտեմբերի 13-ին՝ ժամը 10:00-ին:

2024 թվականի սեպտեմբերի 13-ին՝ ժամը 10:00-ին նշանակված վարչական վարույթի լսմանը ներկայացել է «ԱՐՏ ՊԵՏՐՈԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ռաֆայել Ձեյնալյանի լիազորված անձ Նորայր Գրիգորյանը:

Վերջինս ներկայացրեց գրավոր դիրքորոշում և ընդունեց, որ վարչական իրավախախտումն արձանագրելու օրվա դրությամբ Աբովյան քաղաքի Սահմանադրության հրապարակ թիվ 7/2 հասցեում «ԱՐՏ ՊԵՏՐՈԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն Աբովյան համայնքի ղեկավարի կողմից հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն տրված չի եղել, միաժամանակ պնդեց որ չի ընդունում իրավախախտման փաստը, քանի որ օրենքի ուժով՝

ֆիկցիայի իրավունքով համարում է թույլտվություն ունեցած: Հայտնեց, որ առևտրի և ծառայությունների ոլորտում արձանագրված իրավախախտումները կարգավորվում է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով՝ մասնավորապես 17.1-ին հոդվածով սահմանված հսկողության իրականացման կարգով, իսկ եթե վարչական մարմինն իր գործողությունների հիմքում դնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, ապա հայտնեց, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքն արձանագրություն կազմելու, վարչական տույժի ենթարկելու վերաբերյալ գործը քննելու իրավասությունը վերապահվել է միայն համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարի վերը նշված գործառույթը որևէ այլ պաշտոնյայի կամ համայնքային ծառայողի փոխանցված լինելու վերաբերյալ կարգավորում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված չէ, հետևաբար գտնում է, որ այս վարչարարությունը օրինաչափ չէ: Միաժամանակ նշեց, որ վարույթի ընթացքում չի խախտվել լսված լինելու և դիրքորոշում ներկայացնելու իրավունքը:

**2.Ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս).**

Համաձայն Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի՝ համայնքի ղեկավարն իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ:

Համաձայն նույն հոդվածի 3-րդ մասի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով իր լիազորություններն իրականացնում է համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Աբովյան համայնքի ղեկավարի 2022 թվականի հունվարի 18-ի N 24 կարգադրությամբ ստեղծել է համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողով:

Աբովյան համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 05-ի N 4752 որոշմամբ Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, տրանսպորտի և գովազի բաժնի աշխատակիցներին վերապահվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն կազմելու լիազորություն:

Համաձայն Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի 48-րդ հոդվածի 1-ին մասի՝ եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2024 թվականի հուլիսի 29-ին (մուտք՝ N S-1521 և S-1520) «ԱՐՏ ՊԵՏՐՈԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Աբովյանի համայնքապետարան է մուտքագրվել հայտեր՝ Աբովյան քաղաքի Սահմանադրության հրապարակ 7/2 հասցեում հեղուկ վառելիքի վաճառքի և 24:00-ից հետո աշխատելու թույլտվություններ ստանալու մասին: Վերը նշված հայտերի կապակցությամբ Աբովյան համայնքի ղեկավարի 2024 թվականի հուլիսի 30-ի N Ե-5080 գրությամբ տրվել է պատասխան:

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի՝ առանց թույլտվության հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական և (կամ) հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական և (կամ) հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառք իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

Համաձայն նույն հոդվածի 2-րդ կետի՝ սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:

Համաձայն Աբովյան համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 16-ի ««ԱՐՏ ՊԵՏՐՈԼ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ռաֆայել Զեյնալյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին» N 3980 որոշման՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով՝ վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում առանց թույլտվության հեղուկ վառելիքի վաճառք կրկին իրականացնելու համար վերջինիս նկատմամբ նշանակվել է վարչական տուգանք 800 000 (ութ հարյուր հազար) դրամի չափով:
Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք է հակաիրավական վարքագիծը շարունակելը, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց պահանջին, իսկ համաձայն նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք է՝ մեկ տարվա ընթացքում կրկին անգամ նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի...:
Վերլուծելով վերը նշված իրավանորմերը և փաստական հանգամանքները վարչական մարմինը գտնում է, որ իրականացված վարչարարությունն օրինաչափ է, քանի որ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հիմքը հանդիսանում է ոչ թե «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրականացված հսկողություն արդյունքում հայտնաբերված խախտումը, այլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219.1-ին և 254-րդ հոդվածների, ինչպես նաև Աբովյան համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 5-ի N 4752 որոշման հիման վրա առևտրի և ծառայության բնագավառում հայտնաբերված իրավախախտումը, իսկ իրավախախտում թույլ տալու հիմքը հանդիսանում է 2024 թվականի օգոստոսի 21-ի N 01 արձանագրությունը: Իսկ ինչ վերաբերում է համայնքի ղեկավարի՝ վարչական տույժի ենթարկելու իրավասությանը, ապա ակնհայտ է, որ օրենքի ուժով համայնքի ղեկավարն օրենքով սահմանված կարգով իր լիազորություններն իրականացնում է նաև աշխատակազմի, միջոցով, իսկ Աբովյան համայնքի ղեկավարի 2022 թվականի հունվարի 18-ի N 24 կարգադրությամբ ստեղծված է համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողով: Իսկ ինչ վերաբերում է «ԱՐՏ ՊԵՏՐՈԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆիկցիայի իրավունքի ուժով թույլտվություն ունենալուն, ապա վարչական մարմինն այն անհիմն է համարում, քանի որ օրենքի ուժով դիմողը կարող է նախ և առաջ ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը եթե հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում, պատասխան չի կայացվում: Իսկ 2024 թվականի հուլիսի 29-ին (մուտք՝ N Տ-1521 և Տ-1520) «ԱՐՏ ՊԵՏՐՈԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Աբովյանի համայնքապետարան է մուտքագրված հայտերի կապակցությամբ Աբովյան համայնքի ղեկավարի 2024 թվականի հուլիսի 30-ի N Ե-5080 գրությամբ տրվել է պատասխան:
Սույն գործով հաստատված փաստ է համարվում ««ԱՐՏ ՊԵՏՐՈԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում առանց թույլտվության հեղուկ վառելիքի վաճառք կրկին իրականացնելը, որպիսի արարքն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված իրավախախտում:
Սույն գործով առկա է նաև վարչական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք, այն է՝ մեկ տարվա ընթացքում կրկին անգամ նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի, ինչպես նաև հակաիրավական վարքագիծը շարունակելը, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց պահանջին:
**Ընդունված որոշման շարադրանքը (եզրափակիչ մաս).**
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 34-րդ հոդվածի, 169.16-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 219.1-ին, 275-283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 302-րդ և 305-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին»

օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ հոդվածով, ինչպես նաև հաշվի առնելով Աբովյան համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 16-ի N 3980 որոշումը և հիմք ընդունելով 2024 թվականի օգոստոսի 21-ի առևտրի և ծառայության բնագավառում վարչական իրավախախտում թույլ տալու փաստի մասին N 01 արձանագրությունը և Աբովյան համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 13-ի արձանագրությունը

**ՈՐՈՇԵՑԻ**

1. «ԱՐՏ ՊԵՏՐՈԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ռաֆայել Ջեյնալյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով՝ վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում առանց թույլտվության հեղուկ վառելիքի վաճառք կրկին իրականացնելու համար նշանակել վարչական տուգանք 800 000 (ութ հարյուր հազար) դրամի չափով:
2. «ԱՐՏ ՊԵՏՐՈԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ռաֆայել Ջեյնալյանը պարտավոր է սույն որոշումն իրեն հանձնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Աբովյանի համայնքապետարանի 900105201272 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնել Աբովյան համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողով:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել կամ վարչական կարգով Աբովյան համայնքի ղեկավարին՝ այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ որոշումն անբողոքարկելի դառնալուց հետո երեք ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՐՏ ՊԵՏՐՈԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ռաֆայել Ջեյնալյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 13
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2024 թվականի N 3879

## «ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 09-Ի N 3836 ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ԿԵՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Վիտալի Եպիսկոպոսյանի հայտը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ի N Բ-6806).

1. «ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տալ բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է):

2. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3. Ուժը կորցրած ճանաչել Աբովյան համայնքի ղեկավարի 2024 թվականի սեպտեմբերի 09-ի ««ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» N 3836 որոշման 2-րդ կետը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 13
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2024 թվականի N 3878

## ԵՊՐԱՔՍՅԱ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 48-րդ հոդվածի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի N 46-Ա և N 47-Ա որոշումների, հիմք ընդունելով Եպրաքսյա Ղազարյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի օգոստոսի 21-ի N Ք-6431) և Աբովյան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 09-ի նիստի N 9 արձանագրությունը.

1. Աբովյան համայնքի 2024 թվականի բյուջեով նախատեսված «Սոցիալական օգնություններ» (բաժին 10, խումբ 7, դաս 1) նախահաշվի «4729» հոդվածից 25 000 (քսանհինգ հազար) դրամ փոխանցել «ԱՄԻՕ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 1150036910418900 տարանցիկ հաշվեհամարին՝ Եպրաքսյա Ղազարյանին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Եպրաքսյա Ղազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 13
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2024 թվականի N 3877

## ԼԻԴԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 48-րդ հոդվածի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի N 46-Ա և N 47-Ա որոշումների, հիմք ընդունելով Լիդա Մաթևոսյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 06-ի N Ք-6694) և Աբովյան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 09-ի նիստի N 9 արձանագրությունը.

1. Աբովյան համայնքի 2024 թվականի բյուջեով նախատեսված «Սոցիալական օգնություններ» (բաժին 10, խումբ 7, դաս 1) նախահաշվի «4729» հոդվածից 35 000 (երեսունհինգ հազար) դրամ փոխանցել «ԱՄԻՕ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 1150036910418900 տարանցիկ հաշվեհամարին՝ Լիդա Մաթևոսյանին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիդա Մաթևոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 13
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

13 սեպտեմբերի 2024 թվականի N 3876

## «ԱՐՄԵՆԻԱՆ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով «ԱՐՄԵՆԻԱՆ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Աշոտ Բոչոյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 11-ի N Տ-1801).

1. «ԱՐՄԵՆԻԱՆ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2024 թվականի մարտի 26-ի N 10062024-07-0082, N 10062024-07-0152, N 10062024-07-0139, N 10062024-07-0105, հունիսի 10-ի N 10062024-07-0173, հուլիսի 17-ի N 17072024-07-0161 և օգոստոսի 22-ի N 22082024-07-0058 վկայականներ) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 2-րդ արդյունաբերական թաղամասի թիվ 6, թիվ 6/2, թիվ 6/2/1, թիվ 7, թիվ 9, թիվ 9/1 և թիվ 9/3 հասցեներում գտնվող անշարժ գույքերին՝ «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի սեպտեմբերի 09-ին կազմված միավորման սխեմայի (կցվում է) համաձայն՝ տրամադրել միասնական հասցե՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, 2-րդ արդյունաբերական թաղամաս, 6:

2. «ԱՐՄԵՆԻԱՆ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 13
ք. Աբովյան

# ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱ

| | |
|---|---|
| Սեփականատեր | Կոտայքի մարզ Աբովյան համայնք, ք. Աբովյան 2-րդ արդյունաբերական թաղամաս թիվ 6<br>ք. Աբովյան 2-րդ արդյունաբերական թաղամաս թիվ 6/2<br>ք. Աբովյան 2-րդ արդյունաբերական թաղամաս թիվ 6/2/1<br>ք. Աբովյան 2-րդ արդյունաբերական թաղամաս թիվ 7<br>ք. Աբովյան 2-րդ արդյունաբերական թաղամաս թիվ 9<br>ք. Աբովյան 2-րդ արդյունաբերական թաղամաս թիվ 9/1<br>ք. Աբովյան 2-րդ արդյունաբերական թաղամաս թիվ 9/3<br>մարզ, համայնք, հասցե |
| «ԱՐՄԵՆԻԱՆ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ » ՍՊԸ | Սեփականության վկայականներ N10062024-07-0082,17072024-07-0161,10062024-07-0152,22082024-07-0058,<br>10062024-07-0139,10062024-07-0105,10062024-07-0173,<br>հողահատկացման հիմքը |




| | |
|---|---|
| Մակերես հա | |
| Ծածկագիր | |
| Նպատակային նշանակություն | |
| Գործառական նշանակություն | |

*Լրացուցիչ նշումներ.*

Մասշտաբ 1:5000

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Վահե Վարդանյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0339 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 03532649 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 06.08.2024 |
| | հատակագծի կազմման | 08.08.2024 |

Կ.Տ

ՉԼ 1

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| | |
|---|---|
| Սեփականատեր | |
| «ԱՐՄԵՆԻԱՆ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ » ՍՊԸ | |

Կոտայքի մարզ Աբովյան համայնք, ք. Աբովյան 2-րդ արդյունաբերական թաղամաս

մարզ, համայնք, հասցե

Սեփականության վկայականներ N10062024-07-0082,17072024-07-0161,10062024-07-0152,22082024-07-0058, 10062024-07-0139,10062024-07-0105,10062024-07-0173,

իրավահաստատող փաստաթուղթ

| | |
|---|---|
| Հաստատում եմ | 13 09 2024թ. |
| Համայնքի ղեկավար | Կ.Տ. |




Մասշտաբ 1:5000

| | |
|---|---|
| Մակերես հա | 8.169088 |
| Ծածկագիր | 07-002-0103- |
| Նպատակային նշանակություն | արդ. ընդ. օգտ-ման և այլ արտ. նշ. օբ-ի հողեր |
| Գործառական նշանակություն | արդյունաբերական օբյեկտների |

ԴՈՂԱՄԱՍԻ

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Վահե Վարդանյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0339 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 03532649 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 06.09.2024 |
| | հատակագծի կազմման | 09.09.2024 |

Լրացուցիչ նշումներ.
Թիվ 1-18 գոյություն ունեցող շինություններ

| Շրջանցման ժամսլաքի ընթացքով կետեր | Հողամասի Կոորդինատներ | | Գծային չափում (մ) |
|---|---|---|---|
| | Y | X | |
| 1 | 8468233 8248 | 4458219 7647 | |
| 2 | 8468235 1947 | 4458223 7111 | 4 18 |
| 3 | 8468235 4313 | 4458223 6384 | 0 25 |
| 4 | 8468237 5268 | 4458229 6749 | 6 39 |
| 5 | 8468242 8885 | 4458245 1218 | 16 35 |
| 6 | 8468244 2555 | 4458249 0601 | 4 17 |
| 7 | 8468245 6349 | 4458253 0341 | 4 21 |
| 8 | 8468255 4076 | 4458281 1878 | 29 80 |
| 9 | 8468255 7019 | 4458282 0355 | 0 90 |
| 10 | 8468261 8711 | 4458299 8083 | 18 81 |
| 11 | 8468264 1623 | 4458306 4088 | 6 99 |
| 12 | 8468267 7091 | 4458316 6266 | 10 82 |
| 13 | 8468275 8269 | 4458340 0129 | 24 76 |
| 14 | 8468282 8471 | 4458360 2372 | 21 41 |
| 15 | 8468293 7400 | 4458391 6179 | 33 22 |
| 16 | 8468308 8881 | 4458435 2576 | 46 19 |
| 17 | 8468326 7726 | 4458486 7804 | 54 54 |
| 18 | 8468329 8368 | 4458495 6077 | 9 34 |
| 19 | 8468333 6289 | 4458506 5323 | 11 56 |
| 20 | 8468343 6111 | 4458501 3743 | 11 24 |
| 21 | 8468373 2547 | 4458459 1171 | 51 62 |
| 22 | 8468387 2834 | 4458441 8080 | 22 28 |
| 23 | 8468488 6957 | 4458370 8758 | 123 76 |
| 24 | 8468511 4300 | 4458353 5400 | 28 59 |
| 25 | 8468537 2173 | 4458334 8329 | 31 86 |
| 26 | 8468543 5723 | 4458331 8204 | 7 03 |
| 27 | 8468550 2258 | 4458329 5813 | 7 02 |
| 28 | 8468570 6039 | 4458323 8029 | 21 18 |
| 29 | 8468599 3713 | 4458316 5861 | 29 66 |
| 30 | 8468606 5520 | 4458317 3864 | 7 23 |
| 31 | 8468608 0418 | 4458313 1983 | 4 45 |
| 32 | 8468609 2520 | 4458310 0654 | 3 36 |
| 33 | 8468607 5444 | 4458300 9371 | 9 29 |
| 34 | 8468603 3533 | 4458266 8554 | 34 34 |
| 35 | 8468797 8893 | 4458242 9442 | 196 00 |
| 36 | 8468789 1056 | 4458171 4820 | 72 00 |
| 37 | 8468626 3306 | 4458191 4893 | 164 00 |
| 38 | 8468624 5006 | 4458176 6014 | 15 00 |
| 39 | 8468617 5529 | 4458177 4553 | 7 00 |
| 40 | 8468619 3829 | 4458192 3433 | 15 00 |

| | | | |
|---|---|---|---|
| 40 | 8468619 3829 | 4458192 3433 | |
| 41 | 8468594 5696 | 4458195 3932 | 25 00 |
| 42 | 8468594 6229 | 4458195 8272 | 0 44 |
| 43 | 8468594 3981 | 4458195 8545 | 0 23 |
| 44 | 8468574 1459 | 4458198 3178 | 20 40 |
| 45 | 8468573 9672 | 4458198 3395 | 0 18 |
| 46 | 8468571 6846 | 4458181 0703 | 17 42 |
| 47 | 8468571 3544 | 4458178 4857 | 2 61 |
| 48 | 8468567 7991 | 4458178 9163 | 3 58 |
| 49 | 8468478 4577 | 4458189 7845 | 90 00 |
| 50 | 8468478 7267 | 4458192 0062 | 2 24 |
| 51 | 8468468 2861 | 4458193 7683 | 10 59 |
| 52 | 8468456 0257 | 4458195 1564 | 12 34 |
| 53 | 8468435 0392 | 4458197 8868 | 21 16 |
| 54 | 8468433 1500 | 4458197 9400 | 1 89 |
| 55 | 8468413 4336 | 4458200 3573 | 19 86 |
| 56 | 8468401 1763 | 4458201 8619 | 12 35 |
| 57 | 8468401 0909 | 4458201 1656 | 0 70 |
| 58 | 8468394 7457 | 4458202 0001 | 6 40 |
| 59 | 8468394 8245 | 4458202 6426 | 0 65 |
| 60 | 8468352 5651 | 4458207 8324 | 42 58 |
| 61 | 8468326 8171 | 4458210 9947 | 25 94 |
| 62 | 8468326 8734 | 4458211 4413 | 0 45 |
| 63 | 8468320 0783 | 4458212 3067 | 6 85 |
| 64 | 8468320 1168 | 4458212 6042 | 0 30 |
| 65 | 8468320 9597 | 4458219 1159 | 6 57 |
| 66 | 8468313 1960 | 4458220 2513 | 7 85 |
| 67 | 8468311 8785 | 4458213 1285 | 7 24 |
| 68 | 8468303 4315 | 4458213 9751 | 8 49 |
| 69 | 8468300 5988 | 4458210 0021 | 4 88 |
| 70 | 8468271 6152 | 4458213 9501 | 29 25 |
| 71 | 8468257 2117 | 4458216 0020 | 14 55 |
| 72 | 8468242 8081 | 4458218 0539 | 14 55 |
| 1 | 8468233 8248 | 4458219 7647 | 9 14 |

| Որակավորում ունեցող անձ | | Վահե Վարդանյան |
|---|---|---|
| Որակավորման վկայականի համարը | | 0339 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 03532649 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 06.08.2024 |
| | հատակագծի կազմման | 08.08.2024 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

13 սեպտեմբերի 2024 թվականի N 3875

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՎԱԾ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, հիմք ընդունելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության բաժնի պետի տեղակալի զեկուցագիրը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 06-ի N Ք-6702).

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2024 թվականի հունիսի 05-ի N 05062024-07-0143 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Սարալանջի փողոցի թիվ 4/11 հասցեում գտնվող հողամասի բաժանված մասերին՝ «ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2024 թվականի սեպտեմբերի 05-ին կազմված բաժանման սխեմայի (կցվում է) համաձայն՝ տրամադրել հասցեներ՝ 103.8 քառակուսի մետր մակերեսով հատվածին՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Սարալանջի փողոց, 4/11, 14.8 քառակուսի մետր մակերեսով հատվածին՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Սարալանջի փողոց, 4/15, 66.5 քառակուսի մետր մակերեսով հատվածին՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Սարալանջի փողոց, 4/16:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 13
ք. Աբովյան

# ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԽԵՄԱ

| | |
|---|---|
| Սեփականատեր | Մարզ Կոտայք, համայնք Աբովյան ք. Սարալանջի փողոց 4/11 |
| Համայնք Աբովյան | Մարզ, համայնք, հասցե |




| | |
|---|---|
| Մակերես հա | 0.01851 |
| Ծածկագիր | 07-002-0089-0398 |
| Նպատակային նշանակություն | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակություն | Բնակելի կառուցապատման |

*Լրացուցիչ նշումներ.*

Մասշտաբ 1:500

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Տիգրան Լևոնյան |
| Որակավորման վկայականի համարը | | 247 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | <<ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ>> ԱՁ |
| ՀՎՀՀ | | 83336834 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 01.09.2024թ. |
| | հատակագծի կազմման | 05.09.2024թ. |

Կ.Տ.

Ձև 1

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| | | |
|---|---|---|
| Սեփականատեր | Մարզ Կոտայք, համայնք Աբովյան ք. Սարալանջի փողոց 4/11 | Հաստատում եմ 13.09.2024թ. |
| համայնք Աբովյան | Մարզ, համայնք, հասցե | Համայնքի ղեկավար Կ.Տ. |
| | | |
| | Հողահատկացման հիմքը | անուն, ազգանուն, հայրանուն |




ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ
ТИГРАН ЛЕВОНЯН
TIGRAN LEVONYAN
83336834

| | |
|---|---|
| Մակերես հա | 0.01038 հա |
| Ծածկագիր | 07-002-0089-0398 |
| Նպատակային նշանակություն | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակություն | Բնակելի կառուցապատման |

*Լրացուցիչ նշումներ.*

| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ X | Կոորդինատներ Y | Գծային չափերը (մ) |
|---|---|---|---|
| 1 | 4459197.31 | 8468895.48 | 33.47 |
| 2 | 4459226.53 | 8468911.80 | 3.16 |
| 3 | 4459224.62 | 8468914.32 | 20.44 |
| 4 | 4459206.40 | 8468905.05 | 1.70 |
| 5 | 4459207.17 | 8468903.54 | 12.45 |
| 6 | 4459196.07 | 8468897.90 | 2.71 |
| 1 | 4459197.31 | 8468895.48 | |

Մասշտաբ 1:500

| | |
|---|---|
| Որակավորում ունեցող անձ | Տիգրան Լևոնյան |
| Որակավորման վկայականի համարը | 247 |
| Ստորագրություն | |
| Իրավաբանական անձի անվանումը | <<ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ>> ԱՁ |
| ՀՎՀՀ | 83336834 |
| Ստորագրություն | |
| ամիս ամսաթիվ չափագրության | 01.09.2024թ. |
| ամիս ամսաթիվ հատակագծի կազմման | 05.09.2024թ. |

Կ.Տ.

Ձև 1

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| | | |
|---|---|---|
| Սեփականատեր | Մարզ Կոտայք, համայնք Աբովյան ք. Սարալանջի փողոց 4/11 | Հաստատում եմ 13.09.2024թ. |
| համայնք Աբովյան | Մարզ, համայնք, հասցե | Համայնքի ղեկավար Կ.Տ. |
| | | |
| | Հողահատկացման հիմքը | անուն, ազգանուն, հայրանուն |




| | |
|---|---|
| Մակերես հա | 0.00665 հա |
| Ծածկագիր | 07-002-0089-0398 |
| Նպատակային նշանակություն | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակություն | Բնակելի կառուցապատման |

*Լրացուցիչ նշումներ.*

| Հողամասի | | | |
|---|---|---|---|
| Բրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 1 | 4459204.05 | 8468909.68 | 19.48 |
| 2 | 4459221.35 | 8468918.64 | 3.63 |
| 3 | 4459219.16 | 8468921.53 | 18.85 |
| 4 | 4459202.52 | 8468912.67 | 3.36 |
| 1 | 4459204.05 | 8468909.68 | |

| Մասշտաբ 1:200 | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Տիգրան Լևոնյան |
| Որակավորման վկայականի համարը | | 247 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | <<ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ>> ԱՁ |
| ՀՎՀՀ | | 83336834 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 01.09.2024թ. |
| | հատակագծի կազմման | 05.09.2024թ. |

Կ.Տ.

Ձև 1

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| | | |
|---|---|---|
| Սեփականատեր | Մարզ Կոտայք, համայնք Աբովյան ք. Սարալանջի փողոց 4/11 | Հաստատում եմ 13.09.2024թ. |
| համայնք Աբովյան | Մարզ, համայնք, հասցե | Համայնքի ղեկավար Կ.Տ. |
| | Հողահատկացման հիմքը | անուն, ազգանուն, հայրանուն |






| | |
|---|---|
| Մակերես հա | 0.00148 հա |
| Ծածկագիր | 07-002-0089-0398 |
| Նպատակային նշանակություն | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակություն | Բնակելի կառուցապատման |
| *Լրացուցիչ նշումներ.* | |

**Հողամասի**

| Բրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ X | Կոորդինատներ Y | Գծային չափերը (մ) |
|---|---|---|---|
| 1 | 4459196.57 | 8468895.06 | |
| | | | 0.85 |
| 2 | 4459197.31 | 8468895.48 | |
| | | | 12.51 |
| 3 | 4459191.61 | 8468906.61 | |
| | | | 12.47 |
| 4 | 4459202.69 | 8468912.35 | |
| | | | 0.36 |
| 5 | 4459202.52 | 8468912.67 | |
| | | | 13.39 |
| 6 | 4459190.71 | 8468906.37 | |
| | | | 12.73 |
| 1 | 4459196.57 | 8468895.06 | |

Մասշտաբ 1:200

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Տիգրան Լևոնյան |
| Որակավորման վկայականի համարը | | 247 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | <<ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ>> ԱՁ |
| ՀՎՀՀ | | 83336834 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 01.09.2024թ. |
| ամիս ամսաթիվ | հատակագծի կազմման | 05.09.2024թ. |

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2024 թվականի N 3874

## ԷԴԳԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ, 55-րդ և 62-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով Էդգար Ավետիսյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 05-ի N Ք-6663).

1. Էդգար Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի հունիսի 30-ի N 30062023-07-0081 վկայական) Աբովյան համայնքի Առինջ գյուղի Գ թաղամասի 8-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող հողամասը վերահասցեավորել՝ համայնք Աբովյան, գյուղ Առինջ, Մարշալ Բաբաջանյան թաղամաս, 2-րդ փողոց, 2:

2. Էդգար Ավետիսյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդգար Ավետիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 13
ք. Աբովյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2024 թվականի N 3873

## ԱՆՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 09-ի N 1036-Ն որոշման, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով Աննա Բաղդասարյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 06-ի N Ք-6675).

1. Փոփոխել Աննա Բաղդասարյանին պատկանող (հիմք՝ 2024 թվականի հունիսի 26-ի N 26062024-07-0237 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի 59/3/1 հասցեում գտնվող 19,2 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը որպես հասարակական կառուցապատման հողամաս:
2. Աննա Բաղդասարյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 6 920 (վեց հազար ինը հարյուր քսան) դրամ՝ որպես հողամասի գործառնական նշանակության փոփոխության ծառայության վճար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աննա Բաղդասարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 13
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2024 թվականի N 3872

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, հիմք ընդունելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության բաժնի պետի տեղակալի զեկուցագիրը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N Ք-6733).

1. Հաստատել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքում գտնվող 07-002-0039- կադաստրային ծածկագրով հողամասից 10.5 քառակուսի մետր մակերեսով հողամասի հատակագիծը (կցվում է):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Հատիսի փողոց, 99/1:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 13
ք. Աբովյան

Թև 1

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| | |
|---|---|
| Սեփականատեր | Կոտայքի մարզ Արզական համայնք, գ. Արզական 4-րդ փկ2.. |
| Արզական համայնք | մարզ, համայնք, ուսգ. |
| | ՀՀ կառավարության 26.05.2006թ. N 1022-Ն որոշում |
| | իրավահաստատման հիմք |

Հաստատում եմ 13.09 2024թ.

Համայնքի ղեկավար Կ.Տ.

անուն, ազգանուն, ստորագրություն




| | |
|---|---|
| Մակերես հա | 0.00105 |
| Ծածկագիր | 07-002-0039- |
| Նպատակային նշանակություն | բնակավայրերի |
| Գործառական նշանակություն | բն. կառ. |

Լրացուցիչ նշումներ.

ՑՈՂԱՄԱՍԻ

| Շրջադարձային կետերի համար | Կոորդինատներ Y | Կոորդինատներ X | Կողմի երկարություն (մ) |
|---|---|---|---|
| 1 | 8469417.1135 | 4460633.0398 | 11.00 |
| 2 | 8469421.8569 | 4460642.9649 | 0.95 |
| 3 | 8469422.7185 | 4460642.5531 | 7.00 |
| 4 | 8469419.7000 | 4460636.2370 | 4.00 |
| 5 | 8469417.9751 | 4460632.6280 | 0.95 |
| 1 | 8469417.1135 | 4460633.0398 | |

Մասշտաբ 1:200

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Վահե Վարդանյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0839 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | |
| ՀՎՀՀ | | |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 30.08.2024 |
| | հատակագծի կազմման | 04.09.2024 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2024 թվականի N 3871

## ԹԱՄԱՐԱ ԻՍՊԻՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով Թամարա Իսպիրյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 06-ի N Ք-6696).

1. Թամարա Իսպիրյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի մարտի 27-ի N 27032023-07-0206 և 27032023-07-0228 վկայականներ) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Օգոստոսի 23-ի փողոցի թիվ 1/13/4 և թիվ 1/13/5 հասցեներում գտնվող հողամասերին՝ «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի սեպտեմբերի 05-ին կազմված միավորման սխեմայի (կցվում է) համաձայն՝ տրամադրել միասնական հասցե՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Օգոստոսի 23-ի փողոց, 15:

2. Թամարա Իսպիրյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Թամարա Իսպիրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 13
ք. Աբովյան

| Սեփականատեր | ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԽԵՄԱ |
|---|---|
| Թամարա Ավետիքի Իսպիրյան | Կոտայքի մարզ Աբովյան համայնք, ք. Աբովյան Օգոստոսի 23-ի փողոց 1/13/4<br>ք. Աբովյան Օգոստոսի 23-ի փողոց 1/13/5 |
| | մարզ, համայնք, հասցե |
| | Սեփականության վկայականներ N 27032023-07-0206 և 27032023-07-0228 |
| | իրավահաստատման հիմքը |




| | |
|---|---|
| Մակերես հա | |
| Ծածկագիր | |
| Նպատակային նշանակություն | |
| Գործառական նշանակություն | |

*Լրացուցիչ նշումներ.*

| Մասշտաբ 1:100 | | | |
|---|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | | Վահե Վարդանյան |
| Որակավորման վկայականի համարը | | | 0339 |
| Ստորագրություն | | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | | «ՋԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | | 03532649 |
| Ստորագրություն | | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 03. 08. 2024 | Կ.Տ |
| | հատակագծի կազմման | 05.08.2024 | |

| | |
|---|---|
| Սեփականատեր | |
| Թամարա Ավետիքի Իսպիրյան | |

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայքի մարզ Արզական համայնք, գ. Արզական Օգոստոսի 23-ի փողոց

մարզ, համայնք, հասցե

Սեփականության վկայականներ N 27032023-07-0206 և 27032023-07-0228

հողահատկացման հիմքը

Հաստատում եմ 13.09.2024թ.

Համայնքի ղեկավար Կ.Տ.

անուն, ազգանուն, հայրանուն




| | |
|---|---|
| Մակերես հա | 0.00186 |
| Ծածկագիր | 07-002-0049- |
| Նպատակային նշանակություն | բնակավայրերի |
| Գործառական նշանակություն | բն. կառ. |

Լրացուցիչ նշումներ.

ՀՈՂԱՄԱՍԻ

| Շրջադարձային բեկման կետեր | Կոորդինատներ Y | Կոորդինատներ X | Գծային չափերը (մ) |
|---|---|---|---|
| 1 | 8468280.5912 | 4459912.5900 | 3.01 |
| 2 | 8468281.9211 | 4459915.2881 | 3.01 |
| 3 | 8468282.9507 | 4459918.1144 | 3.34 |
| 4 | 8468285.9494 | 4459916.6416 | 3.00 |
| 5 | 8468284.6269 | 4459913.9488 | 3.00 |
| 6 | 8468283.3044 | 4459911.2560 | 3.02 |
| 1 | 8468280.5912 | 4459912.5900 | |

Մասշտաբ 1:100

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Վահե Ղազարյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0339 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 03532649 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 03.09.2024 |
| | հատակագծի կազմման | 05.09.2024 |

Կ.Տ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2024 թվականի N 3870

## ԾՈՎԻՆԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ, 55-րդ և 62-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով Ծովինար Հարությունյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N Ք-6734).

1. Ծովինար Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2009 թվականի նոյեմբերի 13-ի N 2420002 վկայական) Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի թիվ 4բ հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, 8-րդ միկրոշրջան, 4/2:
2. Ծովինար Հարությունյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ծովինար Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 13
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2024 թվականի N 3869

## ՍԵՅՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով Սեյրան Սարգսյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N Ք-6739).

1. Սեյրան Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2006 թվականի հոկտեմբերի 03-ի N 2118435 վկայական) Աբովյան համայնքի Առինջ գյուղում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Աբովյան, գյուղ Առինջ, Ա թաղամաս, 3-րդ փողոց, 44:

2. Սեյրան Սարգսյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սեյրան Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 13
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2024 թվականի N 3868

## ԶԱՎԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՍՄԻԿ ԲԱԲԱՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՎԱԾ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով Զավեն Ավետիսյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 06-ի N Ք-6688).

1. Զավեն Ավետիսյանին և Հասմիկ Բաբայանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2024 թվականի սեպտեմբերի 05-ի N 05092024-07-0030 վկայական) Աբովյան համայնքի Առինջ գյուղի Պ. Դուրյան թաղամասի 6-րդ փողոցի թիվ 36 հասցեում գտնվող հողամասի բաժանված մասերին՝ «ԳԵՈՏՈՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի սեպտեմբերի 05-ին կազմված բաժանման սխեմայի (կցվում է) համաձայն՝ տրամադրել հասցեներ՝ 1-ին առանձնացվող հատվածին (400.0 քառակուսի մետր մակերես)՝ համայնք Աբովյան, գյուղ Առինջ, Պ. Դուրյան թաղամաս, 6-րդ փողոց, 36, 2-րդ առանձնացվող հատվածին (400.0 քառակուսի մետր մակերես)՝ համայնք Աբովյան, գյուղ Առինջ, Պ. Դուրյան թաղամաս, 6-րդ փողոց, 36/1:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 20 000 (քսան հազար) դրամ՝ հասցեների տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 13
ք. Աբովյան

Ձև 2

# ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԽԵՄԱ

Կոտայք, համայնք Աբովյան գյուղ Առինջ Պ. Դուրյան թաղամասի 6-րդ փողոց 36 հողամաս

Մարզ, համայնք, հասցե

| Սեփականատեր |
|---|
| Զավեն Ավետիսյան Մակարի |
| Հասմիկ Բաբայան Ռուբենի |




| | |
|---|---|
| Մակերես հա | 0.08 |
| Ծածկագիր | 07-011-0396-0018-հց |
| Նպատակային նշանակություն | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակություն | Բնակելի կառուցապատման |

*Լրացուցիչ նշումներ.*

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Լ.Մարտյան |
| Որակավորման վկայականի համարը | | N 0421 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «ԳԵՈՏՈՊ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | N 00929148 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 29.08.2024 |
| | հատակագծի կազմման | 05.09.2024 |

Կ.Տ.

Ձև 1

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| Սեփականատեր |
|---|
| Զավեն Ավետիսյան Մակարի |
| Հասմիկ Բաբայան Ռուբենի |

Մարզ, համայնք, հասցե

Հողահատկացման հիմքը

Հաստատում եմ 13.09.2024թ.

Համայնքի ղեկավար Կ.Տ.

անուն, ազգանուն, հայրանուն




| | |
|---|---|
| Մակերես հա | 0.04 |
| Ծածկագիր | 07-011-0396-0018-հց |
| Նպատակային նշանակություն | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակություն | Բնակելի կառուցապատման |

*Լրացուցիչ նշումներ.*

Հողամասի

| Եզրագարծային (բեկման) կետեր | Կոորդինատներ X | Կոորդինատներ Y | Գծային չափերը (մ) |
|---|---|---|---|
| 1 | 4453308,8573 | 8465171,8448 | |
| | | | 20,00 |
| 2 | 4453325,2111 | 8465183,3586 | |
| | | | 19,99 |
| 3 | 4453313,6693 | 8465199,6805 | |
| | | | 20,00 |
| 4 | 4453297,3099 | 8465188,1748 | |
| | | | 20,00 |
| 1 | 4453308,8573 | 8465171,8448 | |

Մասշտաբ 1:500

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Լ.Մարգարյան |
| Որակավորման վկայականի համարը | | N 0421 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «ԳԵՈՏՈՊ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | N 00929148 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 29.08.2024 |
| | հատակագծի կազմման | 05.09.2024 |

Կ.Տ.

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Ձև 1

| Սեփականատեր |
|---|
| Զավեն Ավետիսյան Մակարի |
| Հասմիկ Բաբայան Ռուբենի |

Մարզ, համայնք, հասցե

Հողահատկացման հիմքը

Հաստատում եմ 13.09.2024թ.

Համայնքի ղեկավար Կ.Տ.

անուն, ազգանուն, հայրանուն




| | |
|---|---|
| Մակերես հա | 0.04 |
| Ծածկագիր | 07-011-0396-0018-հց |
| Նպատակային նշանակություն | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակություն | Բնակելի կառուցապատման |

*Լրացուցիչ նշումներ.*

Հողամասի

